ձիան թիւը հարիւրը կանցնէր, սորա սեղանը երբէք չէր վերնար. թագաւորական ճանապարհի վերան էր, միշտ երթևեկողներու հացը պատրաստ պիտի լինէր, սորա եօթ դուռան կը բանէր, երկու դուռանը աղքատաց համար էր, ծառաներ վարձած և որդւոցը մին հսկող նշանակած էր, որ աղքատներու և ճանապարհորդի իրաւունքից մի հատ ցորեան չընկնայ իւր շտեմարանը։ Եթէ աղքատներու բաժին ցանքը յաջող եղաւ, Մանաս այն տարին ուրախ էր. իսկ եթէ յաջող չէր, նորա հետ չէր խօսուիր, գլուխը կախած՝ միշտ «մեղայ Աստուծոյ» պիտի կրկնէր։

Մանասի տունը կայր քառասուն օրօրոց. տնեցւոց կէսը Հաշտոյ և կէսն Ղըլկանի բաժանուած էին։

Սարերու վերայ քանի տեղ փարախ ունէր. ուստի մինչև Գոմերը փողրանկներ հաստատած էր, ոչխարաց կաթն փողրանկով տուն կգար։

Գարնան ջրերու յորդած միջոցին երբ Շեռեան անցք չէր տար, անցորդներն տակաւ առ տակաւ մէկ երկու ամսոյ չափ ջրի երկու կողմ գտնուած Մանասի տներն պիտի զետեղուէին մինչև անցք լինէր։

Նա բարի սովորութիւն մի ևս ունէր, Ղլիճ կետուկի գլուխն հիւղեակ մի շինած էր, երկու հոգի անդ դրած էր որպէս զի բքարգելքներուն օգնեն։ Անդամ մի պահապաններն ըստ իւրեանց սովորութեան ձայն մի կը լսեն, այս ձայնի կողմն կերթան յօգնութիւն. սակայն բքարգել եղած մի արջ էր այս և կատաղած՝ յանկարծ պահապանաց մին կը փարատէ, միւսը խոյս կտայ [1]։

1, Բագրեւանդ շրջապատող լեռնաշղթաներն բարձր եւ բքալից լինելով շատ տարի սաստիկ բուք կը լինի, այսպիսի բքալից վայրեր բազմաթիւ կրճերու բարձրութեան վերայ կը տեսնուին հիւղեակներ, կե-